ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԹԵՍՏԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ուղեցույցում ներկայացվում է ուսուցչի ատեստավորման թեստի կառուցվածքը, տրվում են առաջադրանքների կառուցվածքային տեսակների նկարագրությունը, դրանց նմուշ-օրինակները, պատասխանների գնահատման չափանիշները, առաջադրանքներում ընդգրկվող նյութի շրջանակները:

Թեստավորումն անցկացվում է համակարգչային եղանակով, տևողությունը՝ 180 րոպե:

ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Թեստը պարունակում է 60 առաջադրանք, որոնցից հնարավոր է վաստակել առավելագույնը 60 միավոր:

Կառուցվածքային առումով առաջադրանքներն ունեն հետևյալ 2 հիմնական տեսակները՝ ընտրովի պատասխանով առաջադրանքներ և կարճ պատասխանով առաջադրանքներ:

❖ Ընտրովի պատասխանով առաջադրանքների դեպքում տրվում են պատասխանի 4-ական տարբերակներ, որոնցից միայն մեկն է ճիշտ: Ճիշտ պատասխանի նշման դեպքում առաջադրանքին տրվում է 1 միավոր:

❖ Կարճ պատասխանով առաջադրանքները հետևյալ տեսակների են.

- ճիշտ հաջորդականության,
- համապատասխանեցման,
- խնդիրների լուծման,
- ըստ առաջադրանքի պահանջի բոլոր ճիշտ կամ սխալ պնդումների ընտրությամբ առաջադրանքներ:

Այդ առաջադրանքներում տրվում են 7 պնդումներ, շարքեր և այլն, որոնցից առաջադրանքի պահանջին համապատասխանում են մի քանիսը: **Ճիշտ տարբերակների քանակը հարցադրման մեջ չի նշվում**:

Կարճ պատասխանով առաջադրանքին պատասխանելիս անհրաժեշտ է նշել առաջադարանքի պահանջին բավարարող ճիշտ և լիարժեք պատասխանը: Սխալ, թերի կամ ոչ ամբողջական պատասխանի դեպքում միավոր չի տրվում:

Առաջադրանքին տրվում է 1 միավոր, եթե ճիշտ են նշված պահանջին համապատասխանող բոլոր միավորները:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

առաջադրանքի տեսակը	քանակը	Միավորը
ընտրովի պատասխանով	45	45
կարճ պատասխանով	15	15
Ընդամենը	60	60

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՆՄՈՒՇ-ՕՐԻՆԱԿՆԵՐ

Ընտրովի պատասխանով.

Հետևյալ գետերից ո՞ր ն է թափվում Արաքս: (1 միավոր)

1) Դեբեդ
2) Արփա
3) Աղստև
4) Տավուշ

Կարճ պատասխանով.

- ըստ առաջադրանքի պահանջի բոլոր ճիշտ կամ սխալ պնդումների ընտրությամբ առաջադրանք,

Հետևյալ պնդումներից որո՞նք են *սխալ*. (1 միավոր)

1. Լոռու մարզի տարածքով չի անցնում Հայաստանի գլխավոր երկաթուղին:
2. Վարդենիսի և Գեղամա լեռներում գրեթե բացակայում են հրաբխային կոները:

3. Լոռու մարզը, մինչև երկրաշարժը հանրապետությունում շաքարի ճակնդեղի ամենախոշոր մշակողն էր:

4. Տավուշի մարզի մակերևույթի բացարձակ բարձրությունը հարավից դեպի հյուսիս աստիճանաբար ցածրանում է:

5. Սյունիքի մարզը խիստ կարևոր տրանսպորտաաշխարհագրական տարանցիկ նշանակություն ունի:

6. Երևան քաղաքի մեծ մասը նստած է գրանիտային հզոր շերտի վրա:

7. Երևան քաղաքի համար հեռանկարային են համարվում հատկապես գիտատար և բարձր տեխնոլոգիաների վրա հենվող ճյուղերը:

- Ճիշտ հաջորդականության առաջադրանք,

ՀՀ տրված ջրամբարների համարները դասավորել ըստ նրանց տեղադիրքի՝ հյուսիսից հարավ ուղղությամբ: (1 միավոր)

1) Կեչուտի
2) Ապարանի
3) Ազատի
4) Սպանդարյանի
5) Ախուրյանի
6) Արփի լիճ-ջրամբարի
7) Տոլորսի

- Համապատասխանեցման առաջադրանք. (1 միավոր)

Տրված են խառը հերթականությամբ պետություններ և մայրաքաղաքներ:

Նշել տառերի և թվերի ճիշտ համապատասխանությունը:

1) Լեհաստան	ա.Պրահա
2) Հունգարիա	բ. Վարշավա
3) Ռումինիա	գ. Բուդապեշտ
4) Չեխիա	դ. Բեռն

5) Սլովակիա Է. Վիեննա
6) Շվեյցարիա
7) Ավստրիա

- խնդիրների լուծման առաջադրանք. (1 միավոր)

Բնակավայրը գտնվում է հյուսիսային կիսագնդում: Որոշել դրա աշխարհագրական լայնությունը, եթե սեպտեմբերի 23-ին Արեգակի ճառագայթների անկման անկյունը կազմում է 63°: (1 միավոր)

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ՆՅՈՒԹԸ

Ուսուցիչների կամավոր ատեստավորման թեստերի կազմման համար որպես հիմք են ընդունվում հանրակրթական ուսումնական հաստատությունների համար նախատեսված՝ «Աշխարհագրություն» 7-8-րդ, 10-12-րդ դասարանների, 9-րդ դասարանի «Հայաստանի աշխարհագրություն» առարկաների ծրագրերի բոլոր բաժինները, չափորոշիչները, գործող դասագրքերը, ինչպես նաև 6-րդ դասարանի «Բնություն» առարկայի աշխարհագրությանը վերաբերող բաժինները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ղազարյան Է., Վարդանյան Թ., Մելիքյան Գ.,Վարդանյան Թ., Հակոբյան Լ., Բնություն 6, «Աստղիկ Գրատուն», 2023, 176 էջ:
2. Գալոյան Ս., Թանգամյան Տ., Բաբայան Տ., Հարությունյան Հ., Բնություն 6, «Էդիթ Պրինտ», 2024, 177 էջ
3. Վարդանյան Թ., Պոտոսյան Ա. Ասատրյան Վ., Հակոբյան Լ. Աշխարհագրություն 7, «Աստղիկ Գրատուն», 2023, 176 էջ:
4. Հովսեփյան Ա., Մարգարյան Ռ., Աշխարհագրություն 8, «ՄԱՆՄԱՐ», 2024, 176 էջ:
5. Մանասյան Մ., Հովսեփյան Ա., Հայաստան աշխարհագրություն. 9, «Տիգրան Մեծ», 2025, 176 էջ:
6. Պոտոսյան Ա., Ասատրյան Վ., Հայաստանի աշխարհագրություն 9, «Զանգակ», 2025, 176 էջ:

7. Խաչատրյան Ա., Մուրադյան Յու., Աշխարհագրություն 10, «Էդիթ Պրինտ», 2024, 192 էջ:
8. Մանասյան Մ., Հովսեփյան Ա., Պոտոսյան Ա., Ասատրյան Վ., Աշխարհագրություն 11, «Զանգակ», 2025, 192 էջ:
9. Մանասյան Մ., Հովսեփյան Ա., Պոտոսյան Ա., Աշխարհագրություն 12, «Զանգակ», 2023, 128 էջ:

Ծանոթություն: *Գրականության ցանկում չնշված որևէ այլ աղբյուր չի կարող հիմք ծառայել բովանդակային բողոքարկման համար:*